ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Պրոֆ. Բ. Ն. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Քաղաքային վարչությունը և ինքնավարությունը միջին դարերում ուղեկցեցին քաղաքային կյանքի զարգացմանը և առանձնապես աչքի ընկնող մակարդակի հասան Կենտրոնական, Արևմտյան և Արևելյան Եվրոպայի երկրներում։ Քաղաքային ինքնավարությունը երևան էր գալիս տարբեր ձևերով՝ սկսած սենյորիալ քաղաքի քաղաքային դասի ձեռք բերած մասնակի ինքնավարությունից մինչև քաղաք-կոմունաները, որոնք միջնադարյան քաղաքային ինքնավարության զարգացման բարձրակետը հանդիսացան։ Քաղաքային ինքնավարությունը իշխողների կողմից քաղաքային դասին տրվող առանձնաշնորհում չէր, այլ ձեռք էր բերվում երկարատև, համառ, հաճախ արյունալի պայքարի շնորհիվ՝ ընդդեմ քաղաքի տեր ֆեոդալ սենյորի և քաղաքի ֆեոդալական վերնախավի։

Քաղաքային դասի առաջացումը միջնադարյան քաղաքներում անխուսափելի պատմական իրողություն էր, իսկ այդ դասի պայքարը ֆեոդալների անբաժան տիրապետության դեմ և քաղաքային ինքնավարության առաջացումը՝ պատմական օրինաչափություն, ինչպես Արևմուտքի, նույնպես և Արևելքի երկրների համար։ Այլ հարց է, թե ինչ ձևերով ու առանձնահատկություններով էր այն երևան գալիս տարբեր երկրներում և զարգացման ինչ մակարդակի հասավ։

Միջնադարյան Հայաստանի քաղաքային ինքնավարության հարցն առաջ քաշեց ակադ. Ն. Յա. Մարը, Անիի պեղումների արդյունքների ամփոփման կապակցությամբ։ Նա հայտնեց այն կարծիքը, որ Անիում «առաջանում էր, թերևս առաջացել էր ինքնուրույն քաղաքային կյանք, քաղաքային ավագանու գլխավորությամբ և օրենսդիր իշխանությամբ՝ քաղաքի սահմաններում»[1]։ Այնուհետև Ն. Յա. Մարը քաղաքային ինքնավարության մարմին համարում է Անիի արձանագրությունների մեջ հանդիպող «երիցանի»-ն, համեմատության մեջ դնելով այն Մատթեոս Ուռհայեցու «ժամանակագրության» մեջ հանդիպող «ծերք քաղարին» արտահայտության, ինչպես և վրացական մի աղբյուրում հանդիպող ტფილელი ბერხი *(Թբիլիսիի մեծամեծեր) արտահայտության հետ։ Երիցանու քաղաքային ինքնավարության մարմին լինելու տեսակետն ընդունեցին ակադ. Հ. Օրբելին և ուրիշ գիտնականներ, ուստի այն մտավ գիտական գրականության մեջ[2], տեղ գտավ նաև հայ ժողովրդի պատմության դպրոցական ձեռնարկում[3]։*

---

[1] Н. Я. Марр, Ани, Ереван, 1939, *էջ 65։*

[2] С. Т. Еремян, Армения в XI—первой четверти XIII в. («Очерки истории СССР, период феодализма, XI—XV вв.», в двух частях, ч. I, Москва, 1953, *էջ 607։*

[3] *«Հայ ժողովրդի պատմություն», I մաս, Երևան, 1951, էջ 205։*

Ակադ. Հ. Մանանդյանը մեջ բերելով Ն. Յա. Մարի կարծիքը «Երիցանու» մասին, նշում է, որ Դվինի քաղաքային ավագանին հիշատակված է նաև IX—X դդ. արաբական աղբյուրներում։ Բելաձորին հիշատակում է Դվինի ավագանին Իբն Մասլամայի (VII դ.) արշավանքի կապակցությամբ, իսկ Իբն-Հաուկալի ասելով Դվինը գտնվում էր Ամբրատ Ա Բագավորի և նրա նախնիների ձեռքին և քաղաքի մեծամեծների իշխանության ներքո[1]։

Մանանդյանն այնուհետև գրում է. «Հիմնվելով բերված վկայությունների կարևորությունը, ես համարում եմ ավելի քան հավանական, որ Բագրատունյաց գարաշրջանի քաղաքները, որոնք պատկանում էին խոշոր ֆեոդալներին և մեծ մասամբ գարձել էին նրանց նստավայրը, գտնվում էին այդ սենյորների իշխանության ներքո և ունեին սենյորիալ կարգեր։ Ինչպես արևմտաեվրոպական քաղաքները, նրանք կառավարվում էին սենյորիալ կարգերով, պաշտոնական անձանց կողմից, որոնց նշանակում էին նրանց (քաղաքների) տերերը, Բագրատունի թագավորները և մյուս սենյորները»[2]։

Հ. Մանանդյանը խոսում է Բագրատունյաց գարաշրջանի քաղաքների մասին և մասամբ իրավացի է, քանի որ այդ շրջանում քաղաքներն առավելապես սենյորիալ բնույթ ունեին։ Նա չի ժխտում և քաղաքային վարչական պաշտոնյաների առկայությունը, բայց գտնում է, որ դրանք սենյորների կողմից նշանակվող պաշտոնյաներ էին։

Մեր առջև ծառանում է երկու հարց. առաջին՝ քաղաքային ինքնավարություն միջնադարյան Հայաստանում, Բագրատունիների ժամանակ կամ նրանցից հետո՝ XII—XIII դդ., որևէ ձևով իր դրսևորումներն ունեցել է թե ոչ, և երկրորդ՝ եթե այն սաղմնավորվել, զարգացել է, ապա արդյոք «Երիցանի»-ն է եղել քաղաքային ինքնավարության մարմինը։ Առաջին հարցի պատասխանը կազմում է ներկա հոդվածի բուն էությունը, ուստի կարող է երևան գալ հետագա շարադրության մեջ, իսկ երկրորդ հարցին պատասխանելու համար պարզենք, թե ինչ իմաստով է օգտագործվել «Երիցանի» բառը վկայաբերված աղբյուրներում։

«Երիցանին» քաղաքային ինքնավարության մարմին համարելուն հիմք են ծառայել Անիի երկու վիմագիր արձանագրությունները, որոնք փորագրված են Առաքելոց եկեղեցու պատերի վրա։ Առաջին արձանագրությունը, ըստ Ալիշանի, փորագրվել է 1250 թ. «Շնորհին Աստուծոյ ես Սուրայդին քոթիթս իմ ընկերաւքս եկի յԱնի տամդիս վերայ անսայ զԱնոյ իրիցանուս դիտոյնիին հրամանքն որ ի սկզբանէ բաժ ու տամդա չէին տվել, ես այլ հաստատեց իմ ընկերաւքս որ ոչ բաժ տան ու ոչ տամդայ զինչ ի առնիին հրամանքն էր թողաք վասն յերկար կենդանութեան փաթշահին. ով որ այլ բաժ ուզէ կամ տամդայ Աստուծոյ ու ինդեթվոր լինի ու նզոված է ՅԺԲ հայրապետացն մասն զՅուդային եւ զԿայենին առեք. հաստատուն պահաւդրն աւրհին Աստուծոյ»[3]։

Երկրորդ արձանագրությունը փորագրվել է 12 տարի հետո. «ՁԺԲ էլդանին. Շնորհին Աստուծոյ մեք տամդաճիքս վասն յերկար կենդանութեան եւ վասն

---

[1] «Сборник материалов по описанию местностей и племен Кавказа», вып. XXXVIII, 1908, էջ 92—93։

[2] Я. А. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н. э.—XV в. н. э.), Ереван, 1954, էջ 231—232։

[3] Ղ. Ալիշան, Շիրակ, Տեղագրութիւն պատկերացոյց, էջ 62 (ընդգծումները մերն են—Բ. Ա.)։

պատրոնաց մերոց Սահիլ Դիւանին եւ Սահմատին եւ Քարիմադինին բարձաք ի յԱնո իրիցանուս զրաժն զոր ի սկզբանէ ազատ էր մեք վերստին այլ հաստատեցաք չունի ոք իշխանութիւն բաժ ուզելու ոչ ինչ ազգ ով իցէ որ կապէլոր լինի ով այլ խաւսք ասէ կամ ազման անէ բաժի ուզելու, ՅԺԸ հայրապետացն նզոված է հաստատուն պահողքն սուրհնին յԱստուծոյ»[1]։

Այսպիսով, երկու արձանագրություններն էլ վերաբերում են նույն հարցին. Անիի «երիցանին» կամ «իրիցանին» մոնղոլական խանի հրամանագրով ազատված էր բաժ կամ տաւեղա կոչվող հարկերը վճարելու պարտականությունից, սակայն այդ հրամանագիրը խախտվում էր և Անիում նշանակված հարկահանները (տամղաճի) կրկին ու կրկին «երիցանուն» ազատել են այդ պարտավորություններից։ «Երիցանի» կամ «իրիցանի» հավաքական իմաստով գործածված տերմինի տակ կարող է հասկացվել քահանաների դասը կամ հոգևորականությունը, կամ քանի որ «երեց» նշանակում է ավագ, ուրեմն «երիցանին» կարող է հասկացվել իբրև «ավագանի», իսկ վերջինս էլ համարվել է քաղաքային ինքնավարության մարմին, որի ներկայացուցիչները իբրև թե հրամանագրով ազատվել են հարկերից։

Սակայն այդ բանը պնդելու համար հիմքեր չկան։ Հայտնի է, որ հարկերից ազատված էր հոգևորականությունը, բայց մոնղոլներն այդ կարգը հաճախ խախտում, ապա վերականգնում էին։ Անիից հայտնի են և այլ արձանագրություններ, որոնք որոշակիորեն ցույց են տալիս, որ «իրիցանին» քահանայական դասը կամ հոգևորականությունն էր։ Այսպես, օրինակ՝ նույն Առաքելոց եկեղեցու արևելյան պատին փորագրված է. «Ի։ ՈՀԴ։ (1225) թուին, եւ չունի ոք իշխանութիւն յիրիցո հարկս առնուլ...»

«Ի։ ՈՀԶ։ (1227) թուին... ես տէր Երիգոր արհիեպիսկոպոս մայրաքաղաքիս Անո... թողի զհարկ Խաւանայից քաղաքացեաց զոր ի մահուան աւրն տային...»։ Նույն եկեղեցու վրա՝ «...ես տէր Սարգիս եպիսկոպոս իրիցանու զեկաց և զ(ընակա)ց զհրամանն ի պսակ... չուզէ թէ դուստր թէ կորիճ ի Անի պսակի...»։ Դարձյալ նույն եկեղեցու վրա ՈԿԹ (1220) թ. փորագրված է արձանագրություն, որի մեջ ասվում է. «Շնորհին Աստուծոյ ես տէր Սարգիս որդի Ապիրատին առաջնորդ մայրաքաղաքիս Անւոյ և կամակցութեամբ Ամիրիս Երկաթայ... ազատեցաք զամենայն քաղաքիս Խաւանայից զիրիցակնոջ մուտք զմահու և զկենաց և զմատաղից զփարթամաց և զաղքատաց զեկաց և զընակաց, թէ լաւ և թէ վատթար իրիցկին վախճանի ոչ մեծ մուտք ոչ փոքր ի յաթոռս չտայ այլ ազատ են մինչ ի գալուստ Բանին Աստուծոյ... Ամենայն իրիցկին յորտեղ վախճանի այն տանն երեցն չունի հրաման յԱստուծոյ մուտք յուզելոյ՝ մեծ կամ փոքր...»[2]։

Մեջ բերված արձանագրություններից պարզվում է, որ Առաքելոց եկեղեցին հանդիսացել է այն հուշարձանը, որի վրա հրապարակվել են հոգևորականության, մասնավորապես նրա կողմից վճարվող և գանձվող հարկերի ու տուրքերի վերաբերյալ օրենքներն ու կարգադրությունները։ Տարակույս չի մնում, որ «իրիցո», «իրիցկին», «իրիցանի» տերմինները «ի» սկզբնատառով որոշակի վերաբերում են միայն հոգևորականությանը և աշխարհիկ «երեց»—ավագ և «երի-

1 Ալիշան, Շիրակ, էջ 62։

2 Այս հատվածները քաղել ենք Անիի վիմագիր արձանագրությունների ժողովածուից, որը տպագ. Հ. Օրբելին հավաքել ու հրատարակության է պատրաստել և որը կազմելու է «Դիվան հայ վիմագրության» ժողովածուի առաջին պրակը։

ցանի»— ավագանի իմաստը չեն արտահայտում, հետևաբար «իրիցանին» կամ «երիցանին» քաղաքային ինքնավարության մարմին լինել չէր կարող։

Սակայն քաղաքային ինքնավարությունը և քաղաքային դասի պայքարը ֆեոդալ սենյորների դեմ հանուն այդ ինքնավարության, խորթ չեն եղել միջնադարյան Հայաստանի քաղաքներին։ Ըստ էության դա պայքար էր ինքնավար համայնքի համար, մի պայքար, որը Հայաստանում մղում էին ինչպես պավլիկյանները, նույնպես և թոնդրակյանները VIII—XI դդ.։ Հայտնի է նաև, որ պավլիկյանները ստեղծեցին բոլորովին ինքնավար քաղաքային համայնք Տեփրիկեում՝ Բյուզանդական կայսրության սահմաններում, դեռևս IX դ.։ Իհարկե դա արդյունք էր ֆեոդալների դեմ ճնշված դասակարգի մղած սոցիալական պայքարի և տարբերվում էր սենյորի դեմ հանուն ինքնավարության քաղաքային դասի (ամբողջությամբ վերցրած) մղած պայքարից, սակայն իրրև քաղաքային ինքնավար համայնքի ստեղծման փաստ արժանի է ուշադրության։

IX—X դդ., երբ առաջացավ և հիմնականում ձևավորվեց ֆեոդալական քաղաքը, այն դեռևս ամբողջովին սենյորիալ բնույթ էր կրում։ Արաբական տիրապետության ժամանակ քաղաքները ձևականորեն համարվում էին պետական, սակայն իրականում նրանք անմիջապես ենթակա էին պետության կողմից նշանակված ամիրային, որի իշխանության մեջ միավորված էին վարչական, ռազմական և տնտեսական ֆունկցիաները։ Նրան ենթակա էին քաղաքների հարկահանները՝ ամիլները և շուկայի վերահսկիչները՝ մուհթասիբները։ Քաղաքներում հաստատվեց դատարան, որի գլուխ կանգնած էր դպին։

Արաբական տիրապետության տապալումից հետո, երբ ֆեոդալական քաղաքի առաջացումն ու ձևավորումը ընթանում էր առավել բուռն թափով, քաղաքները (լինեին դրանք Բագրատունիների, թե Վասպուրականի թագավորությունների մեջ կամ Հայաստանի հարավի ամիրայություններում) համարյա բոլորն էլ խոշոր ֆեոդալների նստավայրեր էին և կառավարվում էին նրանց կողմից՝ ունենալով միանգամայն բնորոշ սենյորիալ կարգեր։ Բագրատունիներն ու Արծրունիները քաղաքներում նշանակում էին թագավորական տան իշխաններից մեկին, որը դառնում էր տվյալ քաղաքի տերը և ենթակա էր միայն թագավորին։ Քաղաքների վարչական, ռազմական և տնտեսական իշխանությունը կենտրոնացած էր սենյորների ձեռքին, բացի դատական իշխանությունից, որը գտնվում էր հոգևորականության ձեռքում, բայց սենյորը ուներ վերահսկողության իրավունք։ Բյուզանդական տիրապետությանը ենթակա Արևմտյան Հայաստանում կայսրությունը նշանակում էր կառավարիչներ, որոնք արտոնվում էին ինչպես վարչական, նույնպես և զինվորական ու տնտեսական լիազորություններով։

Քաղաքների զարգացմանը, եկամտաբեր հաստատությունների առաջացմանը համընթաց այստեղ են կենտրոնանում զգալի թվով ֆեոդալական տարրեր՝ աշխարհիկ ֆեոդալներ և բարձր հոգևորականություն, սակայն աստիճանաբար ավելի ու ավելի են ստվարանում վաճառականների, վաշխառուների, վարչական ու տնտեսական զանազան պաշտոնյաներից բաղկացած քաղաքային վերնախավի շարքերը։ Բայց շատ ավելի բազմամարդ էին քաղաքի ստորին խավերը, որոնք բաղկացած էին արհեստավորներից, մանր առևտրականներից, քաղաքի երկրագործ բնակչությունից, ծառաներից, փախստական ճորտերից, քաղաքային «ամբոխից»։ Քաղաքի ստորին խավերի աճը տեղի էր ունենում ավելի արագ և առավել մեծ չափերով։

X դ. երկրորդ կեսին արդեն ֆեոդալական քաղաքն ստանում է իրեն բնորոշ և ցայտուն կերպով արտահայտված դասային կազմ, սրվում է շահերի բախումը, որը երևան էր գալիս ոչ միայն տարբեր դասակարգերի ու դասերի միջև, այլև միևնույն դասի ներսում։ Բազմակողմանի կերպարանք ունեցող և տևական այս պայքարի հետևանքով սենյորի անբաժան իշխանությունը քաղաքներում սկսում է առաջին ճեղքերը տալ՝ սահմանափակվել քաղաքային, այս կամ այն չափով կոլեգիալ, իշխանությունների երևան գալով և աստիճանաբար խախտվում է։ Ահա այս եղանակով դեռևս սենյորիալ քաղաքում սաղմնավորվում է քաղաքային ինքնավարությունը։

Ճիշտ է նկատված, որ քաղաքային ինքնավարությունը միանգամից գոյանալ չէր կարող։ Սենյորիալ քաղաքում կյանքը մշտապես ավելի ու ավելի բարդ կերպարանք է ստանում, և սենյորն իր պաշտոնյաներով ի վիճակի չի լինում ընդգրկելու քաղաքային կյանքի բոլոր կողմերը, իսկ բնակչության, մանավանդ վերնախավի, տնտեսական դերի հարատև աճը պայմանավորում էր նրանց մասնակցության անխուսափելիությունը քաղաքի տնտեսական, այլև քաղաքական կառավարմանը[1]։ Այս պայմաններում սենյորը մասամբ շահագրգռված էր, բայց անխուսափելի անհրաժեշտությանը տեղի տալով, ավելի շուտ հարկադրված էր քաղաքի կառավարման մեջ ներգրավել ֆեոդալական ավագանու և մեծատունների ներկայացուցիչներին, որոնց ձեռքին հետզհետև փաստորեն կենտրոնանում էին եկամտի աղբյուրները և առհասարակ տնտեսական կյանքի գլխավոր մասը։ Դեռևս սենյորիալ կարգերի պայմաններում քաղաքի կառավարմանը քաղաքային բնակչության, իշխող վերնախավի ներկայացուցիչների մասնակցությունը՝ քաղաքային ինքնավարության առաջացման ճանապարհին կատարվող առաջին քայլն էր[2]։

Դժբախտաբար ժամանակի հայկական աղբյուրներում տեղեկություններ չեն պահպանվել այդ հարցի վերաբերյալ, սակայն Իբն-Հաուկալի «Երիք ճանապարհների և թագավորությանց» 977/8 թ. գրված աշխատության մի վկայությունից երևում է, որ այդ քայլը Հայաստանում կատարվել էր արդեն X դ.։ Ասելով, թե Դվինը գտնվում է Աշոտ Ա թագավորի որդու և նրա նախորդների ձեռքին, Իբն-Հաուկալը տեղեկացնում է, որ «Քաղաքը գտնվում է մեծամեծների իշխանության ներքո՝ նրա բնակիչների թվից»[3]։

Ինչպես ուրիշ երկրներում, օրինակ, Ֆրանսիայի հարավում՝ Լանդեդոկում[4], Հայաստանում ևս քաղաքային ինքնավարության զարգացման երկրորդ քայլը կամ աստիճանը եղավ սենյորիալ իշխանության առկայության պայմաններում, և նրա կողքին, քաղաքային վերնախավերի ներկայացուցիչներից կազմված վարչության առաջացումը։ Վերևում տեսանք, որ այդ վարչությունը «երիցանին» չէր։ Հարց է առաջանում՝ իսկ նրա գոյությունը հաստատող փաստեր կա՞ն և ինչպե՞ս էր կոչվում այն։ Բարեբախտաբար այս հարցի պատասխանը գտնում ենք XI—XIII դդ. աղբյուրներում։ Պարզվում է, որ քաղաքներն ունեին ամբողջ քաղաքին և նրա բնակչությանը վերաբերող առավել կարևոր հարցերը տնօրի-

[1] В. В. Стоклицкая-Терешкович, Основные проблемы истории средневекового города X—XV веков, Москва, 1960, էջ 139։

[2] Նույն տեղում։

[3] «Сборник по описанию местностей и племен Кавказа», вып. XXXVIII, 1908, էջ 92—93։

[4] В. В. Стоклицкая-Терешкович, Նշվ. աշխ., էջ 139։

նող մի խորհուրդ, որը բաղկացած էր քաղաքի մեծամեծներից։ 1045 թ., երբ Կոնստանտին Մոնոմախ կայսրը խարերությամբ իր մոտ կանչեց Գագիկ Բ-ին և կալանավորեց Կոստանդնուպոլսում, Անիի ավագանու խորհուրդը բռնարկում է ստեղծված դրությունը և կամենում լուծել մայրաքաղաքի բախտը։ Արիստակես Լաստիվերտցին այդ մասին ասում է. «Իսկ Քաղաքացի գլխաւորքն որ նստէին յԱնի, իբրև տեսին թե արգելաւ Գագիկ ի Յոյնս, խորհեցան երբեմն ի Դաւիթ տալ զքաղաքն՝ ի Դունացին, քանզի քոյրն Դաւթի կին էր նորա (Գագիկի), երբեմն ի Բագարատ թագաւորն Արխազաց»[1]։

Անիում Գագկաշեն տաճարի պեղումների ժամանակ հայտնաբերված քարերի վրա եղել են արձանագրության մնացորդներ, որոնք վատ են պահպանվել, սակայն Հ. Օրբելուն հաջողվել է կարդալ «Գլխաւորք քաղաքիս պահին.. արտահայտությունը։

X—XIII դդ. ավագների կամ ծերերի խորհուրդ գոյություն ուներ Մերձավոր Արևելքի շատ քաղաքներում։ Ուռհայեցին հիշատակում է Սիդոն քաղաքի ծերերին։ Սիդոնացիք ուղարկում են «ղծերան քաղաքին իբրևանց» քաղաքի վրա արշավող Զմշկիկ կայսեր հետ բանակցություններ վարելու քաղաքի հանձնման, նրա բախտի և հարկերի վճարման մասին։

Անիի ավագանին և նրա կարևոր դերը հիշատակված են նաև 1126 թ. դեպքերի կապակցությամբ, երբ Արուլսուարի որդի Փաղլունը պաշարել էր քաղաքը և կամենում էր վերականգնել իր տոհմի իշխանությունը Անիում ու Շիրակում։ Անիի բնակիչները համառ դիմադրություն են ցույց տալիս Փաղլունին, բայց ի վերջո նրանք «հարկեցան տալ անդրէն ի Փաղլունն զսա [Անին], դաշինս երդմանց պահանջել ի նմանէ՝ չառնել վրէժս»[4], իր հոր և եղբայրների դերության և Վրաստան տարվելու առթիվ։ Եթե Սամվել Անեցու այս վկայությունից որոշակիորեն չի երևում, թե ո՞վքեր էին Փաղլունից երդման դաշինք պահանջողները, ապա Վարդան Բարձրբերդցին պարզ ասում է, թե Փաղլունը «աղերսանօք խնդրէ յԱպուլեթէ և յաւագաց Քաղաքին», որ վերը հաշտությամբ լուծվի։ Վերհիշենք, որ վրացի Ապուլեթը Դավիթ IV-ի կողմից Անիում նշանակված իշխանավորը կամ քաղաքապետն էր, որին (ինչպես և քաղաքի ավագներին) դիմում էր Փաղլունը։

Ստեփանոս Օրբելյանի մի վկայությունից պարզ երևում է, որ ավագներ՝ խորհուրդ կար Նախճավանում։ Հեղինակը պատմում է, որ Էլիկումը սպանվեց «եւ մնաց փոքրիկ մանկիկն Լիպարիտ որդի առ մօր իւրում, զոր իբրև իմացան գլխաւորք Քաղաքին ածին զմայրն և զմանուկն ի Նախճաւան և պահէին ի պատանդի»[6]։ Մի վարքագրական գրվածքում պատմվում է, թե 1290 թ. սելջուկյան զորքերը հարձակվում են Արևմտյան Հայաստանի վրա և գերի են տանում Խարբերդի մոնղոլական էմիր Խարբանդայի եղբորը։ Այդ առթիվ ասվում է. «Եւ յաւուրսն յայնոսիկ նստեալ գլխաւորաց Քաղաքին ի դարպաս մի մեծ և խորհուրդ առնէին ընդ միմեանս վասն դնելոյ զեղբայրն ի գերութենէ և սահ-

1 Արիստակես Լաստիվերտցի. Պատմութիւն, էջ 42։
2 Անիի արձանագրությունների՝ Հ. Օրբելու կազմած ժողովածու, արձանագրություն N 191։
3 Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 24։
4 Սամվել Անեցի, էջ 127։
5 Վարդան Բարձրբերդցի, էջ 120։
6 Ստեփանոս Օրբելյան, էջ 395։

մանեալ՝ հարկապահանջութիւն յաշխարհին՝ ժողովել դանձս ի մեծամեծաց ոչինչ ի փոքունց և ի տնարդել աղջկանց»[1]։

Նույն այս խարրերդ քաղաքի ավագների խորհուրդն է ընդունում Գրիգոր Բալուեցի վարդապետի մահապատժի վճիռը։ «Եւ զլխաւորսն Ժ (10) աթոռով նստեալ ի քաղաքէն և յայլ քաղաքաց եկելոց ... և կացուցին առաջի աստենին զվարդապետն Գրիգոր»[2]։

Բերված փաստերը ցույց են տալիս, որ քաղաքներում X—XII դդ. գոյություն ուներ ավագների խորհուրդ, որը կազմվում էր ի «ծերոց քաղաքին» կամ «յաւագաց քաղաքին» այսինքն քաղաքի մեծամեծներից, որոնք աղբյուրներում սովորաբար կոչվում են «զլխաւորք քաղաքին»։ Սա քաղաքային վարչության կոլեգիալ մարմին էր։ Ավագների խորհուրդը, «զլխաւորք քաղաքին», ինչպես տեսանք բերված վկայություններից, լուծում էր քաղաքի կյանքին վերաբերող առավել կարևոր հարցերը, այն է՝ ո՞ւմ իշխանությանը պետք է ենթարկվեր քաղաքը, ի՞նչ չափով և ի՞նչ հարկեր պետք է վճարեին քաղաքի բնակիչները և նրա տարբեր դասերը (ինչպես դա երևում է Ուռհայեցու վկայությունից և Անիի արձանագրություններից), հետևապես, նա ուներ որոշ օրենսդրական իշխանություն, ինչպես և դատական իրավասություն։ Սակայն այս ամենով հանդերձ քաղաքային ինքնավարության այս մարմինը ենթակա էր ֆեոդալ սենյորին։ Քաղաքների ավագանու այս խորհրդի մեջ XI—XIII դդ. մտնում էին քաղաքի ամիրան կամ քաղաքապետը, եպիսկոպոսը կամ դաղին, իսկ խառը բնակչություն ունեցող քաղաքներում՝ թե՛ մեկը և թե՛ մյուսը, ինչպես նաև այլ խոշոր պաշտոնյաներ, ֆեոդալներ ու մեծատունների ներկայացուցիչներ և քաղաքային թաղապետներ (տանուտերներ)։ Այդ տեսակետից ուշագրավ է բյուզանդական մագիստրոս, «արևելից կատապան» Բագրատ Վխկացու Անիում թողած արձանագրությունը մի շարք հարկերի վերացման մասին, ըստ որում դա արվել է «յորժամ առին զտանուտերութիւնս Մխիթար իպատոսն կրտին որդին եւ Գրիգոր Լապաստակի որդին սպաթար կոնկիտատն և Սարգիս Արտաւազդ որդին սպաթար կոնկիտատն», որոնք և վերացրին հարկերը Բագրատի համաձայնությամբ[3]։ Ինչպես տեսնում ենք, Բյուզանդական կայսրությունը Անիի տանուտերներին (թաղապետներին) շնորհել էր տիտղոսներ։

Քաղաքային ինքնավարության մարմնի մեջ թերևս մտնում էին նաև այլազգի բնակչության ռայիսներ և քաղաքային արհեստավորական եղբայրությունների «ատյան ծերոց» կոչվող տասաքաղաքային խորհրդի ներկայացուցիչներ, թեև այդ բանը հաստատող տվյալներ չունենք։

Քաղաքային վարչության «գլխաւորք քաղաքին» կոչվող մարմնի գլուխ կանգնած էր քաղաքապետը, որը աղբյուրներում հանդիպում է «քաղաքապետ» «ամիրա քաղաքին» անունների տակ։ IX դ. հիշատակվում է Թիֆլիսի «քաղաքապետն Սահակ»։ Սա դեռևս քաղաքի տեր սենյոր էր, ինչպես երևում է Թովմա Արծրունու վկայությունից։ Երբ Բուղայի զորքերը պաշարեցին Թիֆլիսը, Սահակը փորձ արեց փրկել քաղաքը արաբների հետ բանակցելով, որի համար նա դուրս է գալիս քաղաքի սենյորին վայել զգեստավորմամբ։ «Իսկ քաղաքապետն

---

1 «Հայոց նոր վկաներ», էջ 108։
2 Նույն տեղում, էջ 111։
3 Ալիշան, Շիրակ, էջ 70—72։

Սահակ ելեալ ընդ դուռն, որ ելանէ ի բերդն Շամշլտայ, սամոյր զինքեամբ արկեալ և գաւազանն ի ձեռին առեալ...»[1],— ասում է պատմիչը։

IX—XI դդ. շատ քաղաքներ իրենց գավառով դարձել էին առանձին ամիրայություն, և ամիրան միաժամանակ գավառապետ, այսինքն պարզապես ֆեոդալ սենյոր էր։ Բյուզանդական կայսրության մեջ իրբև քաղաքապետ ու գավառապետ նշանակվում էին իշխանները կամ մեծ մասամբ զորավարները։ Այդպիսին էր նաև Մելիտենեի «քաղաքապետ» հայազգի իշխան Գաբրիելը XI դ[2]։ Աղբյուրներում վկայություն կա, որ սելջուկների մոտ ևս քաղաքի զորագլուխը միաժամանակ բաղաքի վերակացուն էր. «զօրագլուխ քաղաքին, որ արքունական հրամանաւ ընկալեալ ունէր զվերակացութիւն քաղաքին»[3]։

Սակայն դեռևս սենյորի իշխանության պայմաններում քաղաքային ինքնավարության մարմնի առաջացման հետ, լայն առումով գործածվող ամիրա տերմինը տարբերակվելով «ամիրա քաղաքին» ձևով, ավելի նեղ իմաստ է ստանում և նշանակում է քաղաքապետ կամ քաղաքագլուխ։ Սա նշանակվում էր ֆեոդալ սենյորի կողմից և կանգնած էր քաղաքային ավագանու խորհրդի գլուխ։ ՈԿԵ (1216) թ. Անին Զաքարյանների սենյորիալ տիրույթն էր, բայց նրանք քաղաքի ամիրա էին նշանակել ոմն Վահրամի, թերևս Պահլավունի տոհմից, որը Անիի Գրիգոր եպիսկոպոսի հետ միասին վավերացրել է վրաց Եպիփան կաթողիկոսի ուղերձը Անիի վրացի բնակիչներին։ Արձանագրության մեջ, ըստ Հ. Օրբելու ընթերցման, ասվում է. «Ես տէր Գրիգոր իրիցապետ ե(պիսկո)պոս ևս Վահրամ ամիրայ քաղաքիս վկա ենք...»[4]։ Նույն ժամանակների մի արձանագրության մեջ, ոմն Լուսոտ շինել է Անիի պարսպի մի աշտարակը և իր թողած արձանագրության մեջ ասում է. «ի յամիրաութեան Վահրամա կատարեցաւ բուրջս»[5]։ Վահրամից հետո, ինչպես երևում է, Անիի ամիրան էր Երկաթը՝ Պահլավունի տոհմից։ Մեռած իրիցկնոջ «զմահուան զկենաց և զմատաղից» «մեծ և փոքր մուտք»-ը վերացնելու առթիվ Առաքելոց եկեղեցու վրա փորագրված ՈԿԹ (1220) թ. արձանագրության մեջ ասվում է. «Ես տէր Սարգիս որդի Աւիրատին առաջնորդ մայրաքաղաքիս Անւոյ և կամակցութեամբ ամիրիս Երկաթա յաղագս բարեպաշտ և Աստուածասէր պատրոնաց մերոց աթաբակ Իւանէի և Ամիրսպասալար Շահնշահ Սարգսի և Աւագի երկար կենդանութեան և յիշատակի մեծ սպարապետին Հայոց Զաքարէի աղատեցաք զամենայն քաղաքիս քահանայից զիրիցկնոջ մուտք զմահուան և զկենաց և զմատաղից...»[7]։ Այս արձանագրությունից պարզվում է, որ «ամիր» բառով հիշատակված է Երկաթի պաշտոնը և ոչ թե մականունը. այդ պատճառով էլ բացի ամիր Երկաթ սովո-

1 Թովմա Արծրունի, էջ 285։

2 Ալիշան, Սիսուան, էջ 47։

3 «Հայոց նոր վկաները», էջ 78։

4 Հ. Օրբելի, նշված անտիպ ժողովածուն, արձանագրություն № 168։ Ղ. Ալիշանի (Շիրակ, էջ 49), ինչպես և Կ. Բասմաջյանի մոտ Վահրամը անվանված է «պատրոն քաղաքիս»։ Այս ընթերցումը տարակուսանք է առաջացնում, որովհետև պատրոն կոչվում էին քաղաքի ֆեոդալ տերերը, իսկ բաղարապետը կարող էր կոչվել ամիրա կամ իրբև ֆեոդալ նաև «պարոն» և ոչ թե պատրոն։

5 Ալիշան, Շիրակ, էջ 43։

6 Հ. Օրբելու կազմած ժողովածուի № 41 արձանագրության մեջ Անիի Բարսեղ արքեպիսկոպոսն իրեն համարում է «որդի ամիր Երկաթի»։

7 Հ. Օրբելի, նշված ժողովածուն, № 43 արձանագրություն։

բական ձևից, հանդիպում է նաև նույն անձնավորության սեպար անունն առանց տիտղոսի[1]։

ՉԼԳ (1284) թ. մի արձանագրությամբ Անիի մեծահարուստ Սահմադինի որդի Սենոպ Սահմադինը վերացնում է Մրեն փոքրիկ քաղաքի «տասնակն հադին որ ի շարիատն» էր։ Արձանագրության վերջում փորագրված է. «Կիկլիչանայ ամիրութեամբս դրեցաւ»[2]։ Հայտնի է, որ Մրենը, Բագրատունի թագավորներին պատկանող, ապա Զաքարյաններին անցած այս փոքրիկ քաղաքը, Սահմադինը 1261 թ. փոդով գնելով Զաքարյան Շահնշահի որդի Արտաշիրից դարձրել էր իր մասնավոր տիրույթը և նստավայրը. սակայն այս փոքրիկ քաղաքում էլ կար քաղաքային վարչություն և քաղաքապետ ամիրա, որի մասնակցությունը, գոնե միջնորդությունը «տասնակն հացին» վերայնելու մեջ ակնհայտ է։ ՉԿԹ (1320) թ. Խուանդիկը, որը նույն տարին վախճանված Անիի տեր աթաբակ Շահնշահի կինն էր, վերացրել է Անի քաղաքի «գկովերոյն և գիշանոյն գհամրերելէն և գդոնագիրն մեծի և փոքու»։ Արձանագրության վերջում փորագրված է. «Այս բարիս և ողորմութիւնս հաստատեցաւ ի յամիրաութեան պարոն Լիպին»[3]։ Այս արձանագրության մեջ ևս երևան է գալիս ամիրայի միջամտությունը հարկերի թողության գործում։

Ամիր տերմինի քաղաքի կառավարիչ կամ քաղաքապետ իմաստը ցույց է տվել ակադ. Ջավախիշվիլին, որը դեռևս 1928 թ. նշել է, որ քաղաքի գլուխ կանգնած էր ամիրը, իսկ առավել խոշոր քաղաքների գլուխ՝ ամիրների-ամիրը։ Ջավախիշվիլուն հետևելով հետագայում նույն բանը պնդում է Ս. Երեմյանը. նա նշում է, որ Հյուսիսային Հայաստանում ամիրները կամ ամիրների-ամիրները ենթարկվում էին Զաքարյաններին, միայն Կարսի ամիրների-ամիրն էր ենթարկվում անմիջականորեն վրաց թագավորին, որ նրանց գործունեությունը վերահսկվում էր քաղաքային ավագների խորհրդի՝ երիցանիի կողմից, որի նախագահն էիս նրանք[4]։ Ամիր տերմինի քաղաքապետ իմաստը Ջավախիշվիլուց անկախ նկատել է պրոֆ. Խ. Սամվելյանը։ Նրա ասելով ամիր նշանակում է «քաղաքի վարչապետ» կամ քաղաքի գերագույն կառավարիչ։ Նա գրում է. «...Անի քաղաքի գերագույն կառավարիչները, որոնք նշանակվում էին վրաց թագավորների կամ Զաքարյանների կողմից, կոչվում էին ամիր... Ուրեմն ամիր տիտղոսը համապատասխանում է բյուզանդական տիրապետության ժամանակվա կատեպանին»[5]։ Բայց այս համեմատությունը հաջող չէ, քանի որ կատեպանը ավելի շուտ նահանգապետ էր, օժտված նաև զինվորական իշխանությամբ, քան քաղաքապետ։

Քաղաքային ինքնավարության պարզացման հետագա քայլերը եղան քաղաքային աշխարհագրի, աշխարհիկ դատարանի և օրենսդրության առաջացումը, քաղաքային բնակչության դերի աճը, հասարակական ժողովների գումարումը և այլն։

---

1 Աբիշան, Շիրակ, էջ 24։

2 Նույն տեղում, էջ 139—140։

3 Աբիշան, Շիրակ, էջ 62—63։

4 С. Т. Еремян, Армения в IX — первой четверти XIII в. («Очерки истории СССР», период феодализма, IX—XV вв.»), ч. I, էջ 607—608.

5 Պրոֆ. Խ. Սամվելյան, Հին հայ իրավունքի պատմություն, հատ. 1, Երևան, 1939, էջ 240—241։

Պետք է նկատել, որ քաղաքային ինքնավարության զարգացման համար գլխավորեն տարբեր պայմաններ կային այն քաղաքներում, որոնք անմիջապես ֆեոդալ սենյորի նստավայր էին, նրա իշխանության կենտրոնը և այն քաղաքներում, որոնք գտնվում էին ընդհանուր պետական ենթակայության ներքո և ազատ էին սենյորի անմիջական ներկայությունից։ Պետական ընդհանուր ենթակայության քաղաքներում շատ ավելի նպաստավոր հող կար քաղաքային ինքնավարության զարգացման համար։

Այդ տեսակետից վերին աստիճանի բնորոշ, թեև կցկտուր փաստեր մեզ հասել են Արծն քաղաքի պատմությունից։ Արծնը անպարիսպ մեծ քաղաք էր, արհեստագործության և առևտրի խոշոր կենտրոն։ Հայաստանի վրայով անցնող հյուսիսային առևտրական մայրուղին Արծնի վրայով միանում էր Սև ծովի խոշորագույն նավահանգիստ Տրապիզոնի հետ։ Արիստակես Լաստիվերտցին, որն ինքն էլ արծնեցի էր, Արծնի մասին ասում է. «Հոյակապ և ականաւոր էր ամենայն աշխարհաց, իբրև քաղաք, որ ի վերայ լերինն կայցէ. և ծով և ցամաք երկնէր և առատանայր կրել ի սմա զլաւութիւն իւր...»[1]։ Մատթեոս Ուռհայեցին ասում է, թե Արծնը հոյակապ ու բազմամբոխ քաղաք է «անթիւ բազմութեամբ լցեալ զարանց և զկանանց և անհամար չափս ոսկւոյ և արծաթոյ»[2]։

Արծնը 1048 թ. գրավեցին ու անդարձ կերպով կործանեցին սելջուկ թուրքերը. այդ առթիվ հայկական աղբյուրների պահպանած վկայությունները լրացվում և ստուգվում են բյուզանդական աղբյուրների շնորհիվ։ Միքայել Ատտալիատեսը Թեոդոսուպոլսի (Կարին) և Արծնի մասին խոսելով ասում է, թե Թեոդոսուպոլիսը «լքված էր և դարձել էր անբնակ, այն պատճառով, որ նրա մոտ էր գտնվում շատ հարմար դիրք ունեցող Արծն Πολιτεια-ն, որտեղ տեղափոխել էին իրենց բնակությունը նրա բնակիչները։ Եվ նա (Արծնը) դարձավ մեծ գյուղաքաղաք. (χωροπολις) լի մեծ քանակությամբ բազմապիսի ապրանքներով, որ բերում էր Պարսկաստանը, Հնդկաստանը և մնացած Ասիան։ Ահա այդ քաղաքը, խոսքս Թեոդոսուպոլսի մասին է, մի քանի տարի առաջ վերականգնված և ամրացված էր խրամով ու պարիսպներով, թուրքերի անվստահելի հարևանության պատճառով, որոնց հարձակումից Արծն Πολιτεια-ն, մեծ կոտորածի զոհ դարձավ և ոչնչացվեց»[3]։

Բյուզանդական մյուս ժամանակագիր Գեորգիոս Կեդրենոսը հաղորդում է, որ Արծնը մարդաշատ ու բազմահարուստ գյուղաքաղաք է (χωροπολις), որ այստեղ պարզապես նշանակում է անպարիսպ քաղաք։ Քաղաքի բնակիչները «չհամաձայնվեցին ապրել պարիսպներից ներս այն ժամանակ, երբ Թեոդոսուպոլիսը հարևան էր նրանց, որը մեծագույն քաղաք էր և ուներ հզոր ու անառիկ պարիսպ, և չնայած, որ Կեկավմենոսը նամակներով և սպառնաց և խնդրեց այդ անել։ Երբ թուրքերը հասան և ձեռնարկեցին գործը (քաղաքի պաշարումը), Արծնի մեջ գտնվողները փակելով ճանապարհները և բարձրանալով տների տանիքները, քարերով, փայտերով և աղեղներով գիմադրում էին հարձակվողներին. և նրանք կռվեցին ամբողջ վեց օր։ Երբ այդ լուրը հասավ ստրատեգներին (զորավարներին), Կեկավմենոսը կողմնակից էր և խնդրում էր դուրս գալ և

---

1 «Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ», Վենետիկ, 1844, էջ 53։
2 Մատթեոս Ուռհայեցի, ժամանակագրութիւն, էջ 102։
3 Attaliata, ed. Bonn, էջ 148։

բախվել թուրքերի հետ...։ Դրան հակառակվում էր Ահարոնը ասելով՝ «ոչինչ պետք չէ ձեռնարկել թագավորական ցանկությանը հակառակ, և նա մնում էր հանգիստ։ Իբրահիմին հայտնի չէր իրերի ընթացքը և չկարողանալով շարունակել քաղաքի պաշարումը և անտեսելով հարստությունն ու ավարը, հրամայում է հրդեհել տները։ Թուրքերը անմիջապես վառելով ջահերը և դյուրավառ նյութ, նետում են տների վրա։ Երբ կրակը բռնկվեց ամենուրեք և բարձրացավ հսկայական հրդեհ, ապա արծնեցիք չկարողանալով դիմանալ կրակին և նետերի հարվածներին, դիմեցին փախուստի։ Ասվում է, թե սպանվեցին շուրջ 150 հազար մարդ, ոմանք զոհ դարձան դաշույնի հարվածներին, ոմանք՝ կրակին։ Նրանք իմանալով, որ պարտվելով պիտի կոտորվեն (մորթոտվեն) իրենց կանանց ու երեխաներին նետում են կրակի մեջ...»[1]։

Այս վկայությունների մեջ մի շարք կարևոր կետեր կան. նախ՝ Արծնը Հայաստանի քաղաքներից միակն էր, որը բյուզանդական աղբյուրներում անվանվում է Πολιτεια, այսինքն՝ ինքնավար համայնք, ուստի նրա բնակիչները չեն կամեցել Թեոդոսուպոլիս (Կարին) փոխադրվել, որպեսզի ոչ միայն նյութական վնասներ չկրեին, այլև ինքնավարությունից չզրկվեին, իսկ կայսրը և նրա ստրատեգ Ահարոնը չէին շտապում պաշտպանել Արծնը և թերևս այդ եղանակով փորձում էին ստիպել նրա բնակիչներին փոխադրվելու Կարին և ենթարկվելու բյուզանդական ստրատեգին։ Երկրորդ՝ քաղաքը սելջուկյան բանակից պաշտպանվել է իր զորքով և սեփական միջոցներով, համառ կռիվներ մղելով վեց օր շարունակ։ Քաղաքի բնակչությունը պաշտպանվել է պարզապես սեփական աշխարհազորի ուժերով, որը հաստատվում է նաև հայ պատմիչների վկայությամբ։ Այսպես՝ Ուռհայեցին գրում է. «Եւ քաղաքացիքն տեսեալ զզօրս այլազգեացն միաբան ի պատերազմ ելեալ, և իմբեցաւ շուրջ զեզերօք քաղաքին սաստիկ և աճաւոր պատերազմ. և եղև զվեց ժամ աւուրն զմիմեանս կոփէին և արեամբ լցաւ անդաստանքն, վասն զի ոչ զոյր տեղի փախստեան և ոչ օգնական, միայն զմահն ունէին յոյս. և ի բազմութենէ անօրինացն ձանձրացան զօրքն քաղաքին և ի փախուստս դարձան. և այլազգիքն սրով յարձակեցան ի վերայ քաղաքին և սաստիկ կոտորածով առ հասարակ ի ներքոյ սրոյ անցուցին զամենայն քաղաքն իբրև զբիւրս հնգետասան»։ Լաստիվերտցին էլ ասում է, թե սելջուկները այնքան մարդ դոտորեցին, «զի ամենայն քաղաքն լի էր դիակամբք անկելոցն, վաճառափողոցք և նրբափողոցք և ընդարձակ սրահք»[3]։

Սելջուկները հրկիզեցին քաղաքը, և բնակիչներից շատերը հրի զոհը դարձան։ Նվաճողները կողոպտեցին քաղաքը և տարան հրից դերծ մնացած հարստությունները՝ բարձած 10 հազար սայլի վրա. ավարի մեջ էր նաև 19 հազար վահան[4]։ Այս վկայությունները շատ բնորոշ են. նրանք խոսում են քաղաքի զորքի մասին, որը կազմված էր քաղաքի բնակիչներից, որոնք միաբան ահավոր պատերազմ մղեցին և մեծ քնակությամբ զենք ու զրահ ունեին։ Ուրեմն Արծնը ինքնավար մեծ քաղաք էր և սեփական աշխարհազոր ուներ։

---

[1] Georgius Cedrenus, Historiarum compedium, t. II, Bonnae, 1839, էջ 577—578։

[2] Մատթեոս Ուռհայեցի, ժամանակագրութիւն, էջ 102—103 (բնագիրը մերն է —Բ. Ա.)։

[3] Ա. Լաստիվերտցի, Պատմութիւն, էջ 57։

[4] Из «Тарих-ал-Камиль Ибн ал-Асира», пер. II, Жузе, Баку, 1940, էջ 116։

Անիի ինքնավարությունն ու սրա գործունեությունը երևան են գալիս ամենավաղական պահին՝ 1045 թ. երբ պետք էր լուծել քաղաքի բախտը, և բյուզանդացիների կողմից Անիի գրավելուց հետո՝ երբ նա դառնում է ընդհանուր պետական ենթակայության քաղաք։ Ուրեմն քաղաքային ինքնավարությունն սկսել էր առաջանալ դեռևս Բագրատունիների օրոք։ Բյուզանդական տիրապետության շրջանում Անիի քաղաքային ինքնավարության մտահոգության առարկան, ըստ մայր տաճարի վրա փորագրված արձանագրությունների, եղել են քաղաքային բնակչությունից գանձվող մի շարք հարկերի թեթևացումը, առևտրի համար դյուրություններ ստեղծելը, քաղաքի բարեկարգումը, օրինակ՝ պարիսպը վերանորոգելը, ջրմուղ անցկացնելը[1]։ Ուշագրավ է, որ վերաբերված հարկերը սերտորեն առնչվում էին քաղաքային կյանքի և տնտեսության հետ։ Ահարոնը Զոյա կայսրուհուց ոսկե մատանիով գիր է բերել «վասն պախտիդ տանց և թաստակին»։ Պախտը քաղաքի տների համար գանձվող հարկն էր, իսկ թաստակը՝ ինչ որ պարտավորություն էր, որը ըստ երևույթին տրվում էր քաղաքի բյուզանդական վարչության և զորքի համար պախտի հետ միասին տարեկան 8 լիտրի չափով։ Ինքը Ահարոնը տեղի իշխանավորների խնդրանքով վերցրել է մուհթասիբի վճարելիք երկու լիտրը։ Բյուզանդական մյուս կատեպան Բագրատ Մագիստրոս Վխկացին վավերացրել է քաղաքի նոր միայն պաշտոնի անցած տանուտերների հրամանագրերը՝ մի շարք հարկերի վերացման մասին. ուրեմն այդ տանուտերները (քաղաքի մեծամեծները՝ թաղապետները) բնակչության ճնշման տակ են գործել ընդառաջելով նրա պահանջին։

Արձանագրության մեջ տանուտերների անունները հիշատակելուց հետո ասվում է «աղատեցին (ուրեմն տանուտերներն աղատեցին) զվեցկէ (երեք զույգ լծվող արորի կամ թեթև գութանի) կոռ», սայլի և կամի կոռը, անգարիոները, որը քաղաքի պարիսպները և ամրությունները բարեկարգ պահելու համար տրվող պարհակն էր։ Բացի այդ սահմանվում է, որ կատեպանը պետք է տար ինչ որ ընդհանուր կարիքների համար հարկավոր 600 մոդ սերմ և «ծախք ընծելոցն», իսկ մյուս մասը կամ այլ ծախսերն էլ պետք է հոգային իրենք՝ տանուտերները։ Արձանագրության մեջ այնուհետև ասվում է, որ տնեցիները աղատվում են մի շարք շուկայական մաքսեր ու տուրքեր վճարելուց. «Դիներեոր անեցի եթէ սայլով եթէ դրաստով՝ բաժն աղատ է. եւ անեցի որ իւրենն մորթելիք գնէ բաժն ազատ է. եւ շալակաւոր անեցի յամէն ցեղ բաժին կէսն ազատ է. եւ ի կասլճին (տվյալ դեպքում՝ մի շալակ բեռ—Բ. Ա.) տաին դահեկանին Զ դրամ, այժմ տան Դ, ոչ ազատ է. եւ մսագործի եթէ պախրէի լինի զլուխ եթէ ոչխարի՝ զկէսն տա կէսն ազատ է և ի նստ ո ին կաղէն ոչ[2]։

Նման խոշոր զիջումները տանուտերները և կատեպանները ստիպված էին անել ոչ այնքան քաղաքային տնտեսության զարգացմանը նպաստելու նպատակով, որքան տեղի տալով բնակչության համառ պայքարին[3]։ Բավական է հիշել, որ 1037 թ. անեցիները ապստամբելով քաղաքից դուրս էին քշել Պետրոս կաթողիկոսին, իսկ 1042—1045 թթ. Անիի բնակչությունն էր, որը հակառակ անեցի ֆեոդալների ու մեծամեծների կամքին, Վահրամ Պահլավունու ղեկավարությամբ պատնեշի պես կանգնեց Անին պաշտպանելու համար և երիցս ջախջախեց բյու-

[1] Ալիշան, Շիրակ, էջ 70։

[2] Նույն տեղում, էջ 70—72 (վերջին բառը սխալ ընթերցված է կամ անհայտ հարկի 600 դրամն է վերացվում)։

[3] И. Орбели, Развалины Ани, СПб, 1911, էջ 17։

գանդական բանակները։ Բնորոշ է, որ Ահարոնի և Բագրատ Վիկացու անունները կրող արձանագրությունները, որոնք պարունակում են քաղաքային բնակչությանն արված մի շարք զիջումներ, փորագրվել են այդ անցքերին հաջորդած 10—20 տարվա ընթացքում։

Հայտնի է, որ սելջուկյան նվաճումներից հետո Ալփ-Արսլանը Անին վաճառեց ծագումով քուրդ Շադդադյաններին։ Անին կրկին սենյորիալ քաղաք դարձավ, որի հետևանքով նրա ինքնավարությունը իհարկե տուժեց, բայց ինչպես երևում է, քաղաքային ավագանու խորհուրդը՝ ամիրի դիմավորությամբ, պահպանվեց։ 1093 թ., երբ քաղաքի սենյորն էր Մանուչեն, իբրև Անիի և Շիրակի իշխան հիշատակվում է Գրիգոր Ապիրատյանը[1] Պահլավունի տոհմից, որն Անիում հաստատվեց խոշոր թվով հայ ազնվականների հետ։ Կարելի է ենթադրել, որ նա Մանուչեի վասալն էր և քաղաքի իշխանության անմիջական դեկավարը։ Շադդադյանների տիրապետության ժամանակաշրջանում նրանց սենյորիալ իշխանությունը հետզհետե ամրապնդվեց։ Շադդադյանները նստում էին քաղաքում և ոչ միայն կեղեքում էին նրա բնակչությանը, այլև անմիջապես տնօրինում քաղաքի կառավարումը։ Անիի պես խոշոր քաղաքում, որի բնակչությունը երբեմն կարողանում էր իր կամքը թելադրել բյուզանդական կատապանին և ֆեոդալական վերնախավին, սենյորիալ վիճակի վերականգնումը հնարավոր դարձավ սելջուկյան արշավանքների ժամանակ քաղաքին հասցված ծանր հարվածների և սելջուկյան տիրապետության հետևանքով։ Սակայն միաժամանակ հետո ավերված քաղաքն սկսեց բուժել իր վերքերը, աստիճանաբար վերականգնվեց քաղաքի տնտեսական կյանքը, վերսկսվեց նաև պայքարը սենյորի իշխանության և կեղեքումների դեմ։

Այնուհետև հայտնի է Անիի բնակչության ապստամբությունը Շադդադյանների դեմ 1123 թ. և հետագա անցքերը մինչև 1126 թ.։ Գիտական դրականության մեջ այդ ապստամբությունը դիտվել է միակողմանի, սոսկ իբրև քաղաքային բնակչության պայքարը օտար տիրապետության և կեղեքման դեմ։ Բնավ չանտեսելով հարցի այդ կողմի կարևորությունը, կկամենայինք ընթերցողի ուշադրությունը սրել մյուս կողմի վրա, և 1123, 1126 թթ. անցքերը դիտել սենյորի դեմ՝ քաղաքային ինքնավարության համար մղված պայքարի տեսանկյունից։

Աղբյուրները հաղորդում են, որ 1123 թ. Անիի բնակչության ներկայացուցիչներն են, որ դիմել են վրաց Դավիթ IV թագավորին՝ խնդրելով ազատել քաղաքը Արուսուարից։ «Տարակուսեալ տառապեալ բնակիչք քաղաքիս Անւոյ և Շիրակ գաւառի խորհեցան ելս գտանել մրրկին ձեռն տալով յարքայն վրաց ի Դաւիթ...»[2]։ «Առնելով զթագաւորն ի ներքս՝ բանալով բղդրունս քաղաքին, որ ընդ մտանելն տուժամայն, եղև վընաս արեան և ոչ միոյ շնչոյ»[3]։ Վարդան պատմիչի վկայությամբ քաղաքի բնակչությունը ընդվզել էր «անարի և կնամարդի» Արուսուարի դեմ, «որ կամեցաւ վաճառել զԱնի վաթսուն հազար դենարի ի վերայ Կարուց ամիրային և ետ բերել նալ ծանրագին և բարձրահասակ ի Խլաթայ, և դնել ի վերայ դմբեթի կաթուղիկէին, փոխելով զեղեալն առաջնոցն. վասն որոյ

---

1 Մատթեոս Օրբելյան. Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 320։

2 «Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 125։

3 Նույն տեղում, էջ 125—126։

սրտառեալ Քրիստոնէիցն կոչէն զԴաւիթ, և տան ի ձեռս նորա քաղաքն Անի»[1]։ Վրաց աղբյուրներն էլ վկայում են, որ երբ Դավիթը մի շարք հարվածներ հասցընելով սելջուկներին եկել էր Թրիալեթի, 1123 թ. օգոստոսին նրա մոտ «եկան անեցի աւագներ (դիվանա)դալիրներ և հայտնեցին քաղաքն ու բերդերը նրան տալու մասին»[2]։ «Եւ հասանէր առ նա թուղթ ի յաւազագն Անւոյ՝ եթէ եկ տացուք զքաղաքս ի ձեռս քո. և գնաց վաթսուն հազար հեծելովք և զկնի երից աւուրց Յառ զնա»[3]։

Այս վկայություններից երևում է, որ քաղաքի բախտը որոշում են նրա բնակիչները կամ քաղաքի ավագները, որոնք հրավիրելով վրաց Դավիթ թագավորին, քաղաքը հանձնում են նրան, բացելով քաղաքի դռները և այնպես անելով, որ արյունահեղություն չլինի։ Դավիթ IV «Անվոյ պահապան թողեց մեսխեցի ազատներին (ազնվականներին), իսկ ինքը վերադարձավ Քարթլի...»[4]։ Վարդան պատմիչն ասում է. «Իսկ թագաւորն զԱբուլեթ և զորդին իւր Իւանէ թողեալ ի յԱնի՝ դառնայ յերկիր իւր, ընդ իւր տանելով զԱպլսուար որդւովք իւրովք, որք անդէն մեռան և ոչ ևս դարձան»[5]։ Այսպիսով, ապստամբ Անին ազատվեց ֆեոդալ սենյորի անմիջական տիրապետությունից և դարձավ ընդհանուր պետական ենթակայության քաղաք։ Աբուլեթը, ինչպես երևում է աղբյուրներից, լինելով Անիի պահապան զորավարը, զուցե և ամիրը, համեշաշխ գործակցում էր քաղաքի ավագանու հետ։ Սակայն սենյորը չէր կամենում իր դիրքերը զիջել և Աբուլսուարի ավագ որդին՝ Փաղլունը, որը գնացել էր Խորասան, 1126 թ. սելջուկյան իշխանավորների օգնությամբ բանակ կազմեց և եկավ պաշարեց Անին։ Ինորոշ է, թե ինչպիսի համառությամբ և անձնվիրությամբ էր կռվում քաղաքի բնակչությունը Փաղլունի դեմ, կանգ չառնելով ոչ մի զոհաբերության առաջ։ Թշնամու դեմ արիաբար կռվում էր Աբուլեթի որդին՝ Իվանեն։ Քաղաքի պաշտպանության համար տղամարդկանց կողքին մաքառում էին և կանայք, որոնցից հերոսության անմահ անուն վաստակեց մի կին՝ «Այծեմն կոչեցեալ»։ Քաղաքում սկսվում է «սով, մարդածախութիւն»[6], և տեղի տալով թշնամու գերակշիռ ուժերին, Անին հանձնվում է Փաղլունին. «Ապա հարկեցան տալ անդրէն ի Փաղլունն զսա դաշինս երդմանց պահանջեալ ի նմանէ», որ տեղի ունեցածի համար վրեժխնդիր չլինի քաղաքի բնակիչներից[7]։ Վարդանի վկայությունից երևում է, որ Փաղլունի հետ բանակցող-պայմանագրվողները եղել են Աբուլեթը և քաղաքի ավագները[8]։

Անիի 1123 և 1126 թթ. պատմական անցքերը հայ և վրացի դարավոր հարևան ժողովուրդների բարեկամության ցայտուն արտահայտություններ լինելով, միաժամանակ քաղաքային ազատությունների և ինքնավարության համար սենյորի դեմ մղված պայքարի նշանավոր դրվագներ են։

Իրենց սենյորի դեմ Անիի բնակչության պայքարի վերաբերյալ մի վկայություն պահպանվել է Ալ-Ֆարիկեի ժամանակագրության մեջ։ 1155 թ. տակ Ալ-

---

1 Վարդան, Հաւաքումն պատմութեան, Վենետիկ, 1862, էջ 119։

2 Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատ. Ա, Երևան, 1934, էջ 218։

3 Նույն տեղում։

4 Լ. Մելիքսեթ-Բեկ, նշվ. աշխ., էջ 218—219։

5 Վարդան, Հաւաքումն պատմութեան, էջ 119։

6 Սամվել Անեցի, էջ 127։

7 Նույն տեղում։

8 Վարդան, էջ 120։

Ֆարիկեն հաղորդում է. «Հոգևորականները (իմա՝ քրիստոնյաները, այսինքն՝ քաղաքի բնակիչները—Բ. Ա.) ապստամբեցին Անա (Անի) քաղաքում և խլեցին այն Ֆախր ալ-դին Շադդադ իբն Մահմուդ իբն Մանուչիհրից և քաղաքը հանձնվեց նրա եղբայր Փաղլունին»[1]։ Անշուշտ այդ ապստամբությունը և իշխանությունը Ֆախր-ալ Դինից խլելն ու Փաղլունին հանձնելը հետապնդել է սենյորի ճնշումը մեղմացնելու և քաղաքի բնակչության համար արտոնություններ ձեռք բերելու նպատակ։ Նման անցքերը կրկնվել են և հետագայում՝ 1161 և 1173 թթ.։ 1161 թ. տակ Ալ-Ֆարիկեն հաղորդում է. «Հոգևորականները Անա քաղաքում ապստամբեցին քաղաքի տիրոջ ամիրա Ֆաղլուն իբն Մանուչիհրի դեմ և նա պարտություն կրեց։ Նա գնաց Բաբրան[2] (կամ Կարան, որը հարևան էր Սուրմարիին)։ Հոգևորականները հանձնեցին Անուն Արիաղիայի թագավոր Գիորգիին. նրա բանակը եկավ և Գիորգին տիրեց քաղաքին։ Նա վերցրեց մեծ ավար Անայից և գերի տարավ Շադդադի ամբողջ ընտանիքը, ներառյալ և Ֆաղլունին (իբն Մահմուդին)։ Ջումադայի 1-ին (մայիս, 1161 թ.) Արիաղիայի թագավորը իր արքունիքի կառավարիչ Սադունին նշանակեց կառավարիչ (Անիում) և վերադարձավ Թիֆլիս»[3]։

Այս անցքերի մասին կան և այլ վկայություններ[4], բայց ուշագրավ են նաև վրաց աղբյուրները։ Գիորգի թագավորը, ինչպես ասում է պատմիչը, «իր ձեռքը դցեց քաղաքը և չհեռացավ այնտեղից, մինչև որ շբարեկարգեց նրա կառավարությունը և հաստատապես չտիրեց նրան իր դահի պահպանության ու ամրացման նպատակով։ Եվ թողեց այնտեղ մանդատուրթուխուցես և ամիր սպասալար Հովհան (Իվանե) Օրբելուն, Սարգիս Մխարգրձելուն և այլ դավառների (թեմերի) մեծամեծ ազնվականներին (ազնավուրներին)՝ տալով նրանց իսնամակալություն (մոուրավ |ութիւն|)...»։ Շուտով Գիորգին իր զորքով հարկադրված եղավ կրկին ճակատամարտ տալ Անիի վրա արշաված սելջուկների բանակի դեմ և ջարդելով նրանց «երեք օր մնաց Անիի դռան |Գեորգ թագավորը|, որն ապա՝ հոգալով քաղաքի մասին և նշանակելով այնտեղ ամիրա և զորաբանակ՝ շարժվեց տեգից և վերադարձավ Տփղիս...»[6]։ Ուշագրավ է, որ Անիում է նշանակվել ամիրա, որը վրաց պետական պաշտոնյա լինելով, միաժամանակ հանդիսանում էր քաղաքի ավազների խորհրդի ղեկավարը։ Վարգանի հաղորդած տեղեկություններից նույնպես իմանում ենք, որ այդ ամիրան եղել է Արծրունի Սադուն իշխանը, ապա Զաքարյան Սարգիսը։ Վարդանը գրում է, որ Գիորգին «թողոյր ի յԱնի զՍադուն իշխանն, յորո վերայ կարծիր ապստամութեան եղեն՝ վասն խնամով տմրացուցանելն զպարիսպ քաղաքին, զոր իմացեալ թագաւորն ընկենու զնա ի պատուոյ...և զիշխանն Զաքարեան Սարգիս՝ գնեն ի տեղի նորա ի յԱնի»[7]։ Սակայն Վարդանը պատմում է, որ սելջուկները չորս տարի շարունակ Անին պահում են «ի տառապանս անվար և անհանգիստ» և Գիորգին գիջում է

---

1 Տե՛ս V. Minorsky, Studies in Caucasian History, London, 1953, էջ 88։

2 Բաքրան ժողովրդական-բարբառային ձևն է Բաղարան հայտնի տեղանվան։

3 Վ. Մինորսկի, նշվ. աշխ., էջ 89։

4 Վ. Մինորսկին մեջ է բերում Ղազի Բարհան ալ-դին Աբու Նասր Մասուդ Անեցու պակաս արժեքավոր վկայությունը (տե՛ս նույն էջը)։

5 Լ. Մելիքսեթ-Բեկ, նշվ. աշխ., հատ. Բ., էջ 8։

6 Նույն տեղում, էջ 9։

7 Վարդան, էջ 127.

քաղաքը նախկին տերերին[1], ըստ որում այդ անում է Ելտկուզ Աթաբեկի միջամտությունից հետո[2]։

1173 թ. (ըստ Վարդանի և Ալ-Ֆարիկեի՝ 1174 թ.) Գիորգին կրկին գրավում է Անին, որտեղ հաստատվում է Իվանե Օրբելին։ Երբ սելջուկյան զորքերը արշավում են Շիրակի վրա, Իվանեն կամենում է քաղաքը հանձնել սելջուկ թուրքերին, բայց «ոչ հաջողեցաւ գործն ղի իմացաւ քաղաքն և ղղուշացան»[3]։ Թշնամին ետ մղվեց, և Անիի եպիսկոպոս Բարսեղի խնդրանքով ղերությունից ազատվելով Անի եկավ նրա եղբայրը՝ Ապիրատը, որը հավանաբար քաղաքի ամիրա դարձավ[4]։

Հզորացող վրացական պետությունը ձգտում էր իր սահմաններում ունենալ մեծահարուստ ու հռչակավոր Անի քաղաքը, որն այդ պետության սյուներից մեկը կդառնար. դա ձեռնտու էր նաև Անիի բնակչությանը, որը ոչ միայն օգուտ կքաղեր բարեկամ ժողովրդի պետական հովանավորությունից, այլև կազատվեր սենյորիալ տիրապետությունից և հնարավորություն կունենար առաջ տանելու իր ինքնավարությունն ընդհանուր պետական ենթակայության քաղաքում։ Ահա թե ինչու Վրաստանի և սելջուկյան իշխանությունների միջև մղվող շատ համառ այդ պայքարում անեցիներն ամբողջովին հակված էին դեպի Վրաստան։

Շուտով Անին նորից անցնում է Շաղդադյան սենյոր-տերերի ձեռքը և այդ վիճակում մնում մինչև XII դ. վերջը։ Քաղաքը աճել, ընդարձակվել էր, առաջադիմել էր նրա տնտեսական կյանքը՝ արհեստագործությունը, առևտուրը, զոյացել էին նոր հասութաբեր հաստատություններ՝ ջրաղացներ, ձիթհաններ, փրնգուկներ, խանաբարներ և այլն։ Աճել էր քաղաքային դասը, բարձրացել էր մեծատունների դերը։ Հետևաբար, երբ 1199 թ. Անին իր դավառով ազատագրվեց և մտավ վրաց պետության կազմի մեջ, քաղաքային ինքնավարության զարգացման համար նախադրյալները ու պայմանները ավելի մեծացան։ Թամար թագուհին ազատագրված Հյուսիսային Հայաստանը, որի մեջ մտնում էր նաև Շիրակը իր Անի կենտրոնով, շնորհեց Զաքարյաններին, բայց Անին նրանց նստավայրը չդարձավ։ Քաղաքի կառավարման համար Զաքարյանները նշանակում էին ամիր, որը գլխավորում էր քաղաքային ավագանու խորհուրդը։ Ամիրը քաղաքի աշխարհիկ իշխանության ղեկավարն էր, իսկ եպիսկոպոսը հոգևոր պետը՝ օժտված գերագույն դատական իրավունքով։ Նրանք երկուսը միասին համարվում էին քաղաքային ավագանու ղեկավարները. ահա թե ինչու 1216 թ. Անի քաղաքի ամիր Վահրամը և Գրիգոր եպիսկոպոսը վավերացրին վրաց Եպիփան կաթողիկոսի ուղերձը, որն ինքնին կարևոր երևույթ էր, քանի որ նշանավորում էր դավանաբանական համբերատարությունը և քաղաքի հայադավան ու վրացադավան բնակչության համերաշխությունը։ Վահրամից հետո Անիի ամիրը Երկաթ Պահլավունին էր։ Այսպես դրությունը շարունակվում էր մինչև մոնղոլական տիրապետության հաստատումը, որից հետո քաղաքի տիրապետության գերագույն իրավունքն անցավ մոնղոլներին, իսկ Զաքարյաններն արդեն նստում էին Անիում և Հանգիսանում քաղաքի պարոնները կամ պատրոնները և ըստ երևույթին վարում էին նաև ամիրի պաշտոնը։ Քաղաքի ինքնավարությունն աստիճանաբար նվազեց և քաղաքի անկման հետ վերացավ։

---

[1] Վարդան, Հաւաքումն պատմութեան, էջ 127։
[2] Լ. Մելիքսեթ-Բեկ, նշվ. աշխ., հատ. Բ, էջ 10։
[3] Վարդան, էջ 130։
[4] Նույն տեղում։

թյան դերի աճման մասին։ Դժբախտաբար այդ կարևոր հարցի վերաբերյալ մատենագրական աղբյուրների վկայությունները կցկտուր են և միանգամայն պատահական։ Մատթեոս Ուռհայեցին մի դեպք է պատմում հայրենի քաղաքի կյանքից։ 1083 թ. մեռնում է Ուռհայի տեր իշխան Վասիլը. դա Մանազկերտի ճակատամարտից հետո էր, երբ Բյուզանդական կայսրության իշխանությունը ծայրամասերի վրա թուլացել էր։ Ուռհան փաստորեն ինքնուրույն քաղաք էր, ուստի քաղաքի բնակչությունն ինքն է որոշում, թե ում պետք է հանձնել քաղաքի տնօրինությունը։ Ժողովուրդը հավաքվում է քաղաքի մայր տաճարը և համապատասխան որոշում ընդունում։ Պատմիչն ասում է. «Եւ արարին ժողով ամենայն քաղաքն ի սուրբ Սոփի և տան զքաղաքն Ուռհա ի ձեռն Սմբատայ՝ առն քաջի և արիական պատերազմողի ընդ Պարսից։ Եւ կացեալ Սմբատայ ի յաթոռ տուկութեանն Ուռհայոյ վեց ամիս»[1]։ Ուրեմն քաղաքի բնակչությունն է որոշում, թե ում պետք է հանձնել քաղաքի զուկության պաշտոնը, որովհետև կայսրությունն այդ անել չէր կարող։ Դա երևում է այն բանից, որ այդ պաշտոնը փորձում է խլել Արջբթենց իշխան անունով մեկը, որը դիմում է Ֆիլարտոս Վարաժնունու օգնությանը և ի վերջո Ֆիլարտոսն է տիրում քաղաքին[2]։ XIII դ. մի քարոզից երևում է, որ քաղաքի հրապարակներում գումարվող հասարակական ժողովները սովորական երևույթ էին և, որ կարևորն է՝ քարոզի հոգևորական հեղինակը զեմ է նման ժողովներին և համարում է դրանք անցանկալի բան։ Քարոզում իրար են հակադրված երկնային արքայությունը և իրական կյանքը։ Առաջինն ազատ է երկրորդի մերժելի և մեղսալից իրականությունից։ Արքայության մեջ չկան դիշեր, մեղքերի խավար, ուտել, ըմպել, մահ, հիվանդություններ, այդ ամենը երկրի վրա է։ Արքայությունն է, որտեղ չկան նաև «դատաւորք և դատք ն ոչ ատեանք և ոչ ժողովք հրապարակաց և ոչ ընչիւք այն չար իշխանութիւնն և սկիզբն պատերազմաց և արմատ թշնամութեանց...»[3]։ Հարցը պարզ կդառնա, եթե նկատի առնվի, որ հեղինակը թվարկում է երկրային կյանքում իշխող չարիքները կապված ապրուստի, ինչքի զրկողության, դատավորների կաշառակերության հետ և խոսում է ինչքի վրա հենված իշխանության ծանրության, դրա հետևանքով առաջացող թշնամանքի և պատերազմների մասին։ Բնագրում «ժողովք հրապարակաց» և իշխանության ու պատերազմի հարցերը, որոնք քննարկվում էին այդ ժողովներում. զրված են կապակցության մեջ, և դա պատահական չէ։ Արծնի բնակչությունը, ինչպես տեսանք, ինքնավար էր և ինքն էր անօրինում իր բախտը։

Անիի հասարակության ժողովների վերաբերյալ թեև մատենագրական տեղեկություններ չկան, բայց հնագիտական տվյալների հիման վրա Ն. Մառը նկատել է, որ Անիի եկեղեցիների գավիթները, մասնավորապես Առաքելոց եկեղեցու գավիթը, հավաքատեղի էր ոչ միայն եկեղեցական արարողությունների ու կրոնական վեճերի, այլև քաղաքի բարեկարգության, պաշտպանության և հասարակական այլ հարցերի քննարկման, ինչպես նաև օրենքների ու հրամանագրերի հրապարակման համար։ Դրանով պետք է բացատրել, որ այս եկեղեցու գավթի պատերը ծածկված են ոչ միայն նվիրատվական, այլև ընդհանուր հասարակական կարգ ու կանոնին վերաբերող արձանագրություններով։ Կերևում հի-

---

[1] Մատթեոս Ուռհայեցի, էջ 222—223։

[2] Նույն տեղում, էջ 223։

[3] Հայկ. ՍՍՌ Մատենադարան, ձեռ. № 2575, էջ 307ա (ընդգծումը մերն է—Բ. Ա.)։

շատակվեց, որ այս եկեղեցու պատերին են փորագրված հողևորականության հարկային պարտավորություններից ազատելու և այլ հրովարտակներ ու օրենքներ։ 1263 թ. մի արձանագրությունից երևում է, որ երկրաշարժի պատճառով արգելվել է կիրակնօրյա վաճառքը քաղաքի փողոցներում, 1320 թ. արձանագրության մեջ խոսվում է որոշ տուրքերի վերացման մասին և այլն[1]։ Ինչպես երևում է, ավելի մեծ նշանակություն ուներ Անիի կաթուղիկեի առջևի հրապարակը, որտեղ կատարվում էր նաև թագավորների թագադրությունը[2]։ Կաթուղիկեի պատերին են փորագրված նաև բյուզանդական կատապաններ Ահարոնի և Բագրատ Վախկացու արձանագրությունները Անիի պարիսպների ամրացման, ջրմուղ անցկացնելու և մի շարք հարկերից ու տուրքերից քաղաքի բնակչությանն ազատելու մասին[3]։ Բնորոշ է, որ Ահարոնի արձանագրության մեջ հատկապես նշվում է, թե հարկերի թողության հրամանը նա բերել է Կոստանդնուպոլսից (առանց որի նա չէր կարող Անի գալ) և ինքն էլ տեղի իշխանավորների (քաղաքի ավագանու) խնդրանքով վերացրել է մուհթասիբին վճարվող հարկը[4]։

Քաղաքների հրապարակներում հաճախ կատարվում էր դատն ու հանցավորների պատիժը, իսկ Գրիգոր Մագիստրոսի մի թղթից երևում է, որ այստեղ էին կատարվում նաև հասարակական հանդեսները ու խաղերը։ Այդ թղթում Վահրամ Պահլավունու կապակցությամբ Գրիգոր Մագիստրոսը գրում է. «...զքոյդ հանդիսի մրցութիւն տաղս և սինչս յօրինեալ անպատկառաբար ազատագունդ պարէին և ի հրապարակս գոհէից և քաղաքաց իրրու զդիւցազն երգէին»[5]։ Ուրեմն քաղաքների հրապարակներում տեղի էին ունենում մրցության հանդեսներ, երգ ու պար, որին մասնակցում էին ոչ միայն ունևոր քաղաքացիք, այլև «զոհէիկները», այսինքն քաղաքի ստորին խավը։

Քաղաքի բնակչության, մանավանդ ստորին խավերի պայքարի և դրա օգնությամբ ձևոք բերած դերի վերաբերյալ մի քանի պատահական փաստեր կան։ Հիշենք այն փաստը, որ 1021 թ. Անին և Շիրակը Բյուզանդիային հանձնելու մասին կտակը ձևակերպելուց հետո, Պետրոս կաթողիկոսը վախենալով անեցիներից՝ քաղաք չվերադարձավ, իսկ 1037 թ., ֆեոդալների և առաջին հերթին եկեղեցու դեմ խռովություն բարձրացրած Անիի ստորին խավերից սարսափած, նույն Պետրոս կաթողիկոսը փախավ քաղաքից և վերադարձավ միայն 4 տարի անց։ 1041 թ., երբ բյուզանդական զորքերը պաշարեցին Անին, ապա քաղաքի վերնախավերը երկպառակությունների ու վարանումների պատճառով քաղաքի պաշտպանության մասին հոգ չէին տանում, բյուզանդասերները Վեստ Սարգիսը անգամ թշնամու կողմն էր անցել։ Քաղաքի պաշտպանության համար ստրի է ելնում ինքը ժողովուրդը։ Զամչյանն օգտվելով մեզ անհայտ աղբյուրներից գրում է. «Ոչ ոք էր որ ընդդեմ ելանէր նոցա (բյուզանդական զորքերին) և վանէր զնոսա... Յայն ժամ շարժեալ ամենայն հայոց առհասարակ ի նախանձ վրիժու, ամենեքին զայրացեալք և բարկութեամբ լցեալք ժողովեցան առ ծերունին Վահրամ սպարապետ Պահլավունի ի յամուրն ներքին, որոյ անուն մեծ էր յայն ժամ առ յոյնս. և ազտչէին զնա առաջնորդել նոցա ի պատերազմ ընդդեմ յունաց.

---

[1] Н. Я. Марр, Ани, столица древней Армении, «Братская помощь пострадавшим в Турции армянам», М., 1898, էջ 210։

[2] Կիրակոս Գանձակեցի, էջ 85։

[3] Ալիշան, Շիրակ, էջ 70—72։

[4] Նույն տեղում։

[5] Նույն տեղում, էջ 70։

ամենեքեան պատրաստ եմք, ասեն, մեռանիլ. բայց ոչ մեռցուք ասեն, մինչև ոչ սպանցուք զթշնամիս մեր, որք տարապարտ եկեալ են ի վերա մեր և կամին յափշտակել զաշխարհս...»[1]։ Այսպիսով, քաղաքի, այլև երկրի պաշտպանության պատրիոտները հանդիսացան ժողովրդական զանգվածները, Ուռհայեցու ասելով, մանավանդ անդեկավար մնացած ու ցիրուցան եղող զինվորները[2], որոնք երդվեցին իրենց կյանքի գնով թշնամուն ջարդել և ետ մղել։ Վահրամ Պահլավունին անցնելով, ըստ Չամչյանի, 30 հազար հետևակ և 20 հազար հեծյալ զորքի, իսկ ըստ Ուռհայեցու՝ 30 հազար հետևակ ու հեծյալ զորքի գլուխ, դուրս գալով Ծաղկոցաձորի դռնից, հարձակվեց թշնամու բանակի վրա և նրան սաստիկ ջարդ տալով, վտարեց երկրի սահմաններից։ Այսպիսով, ճակատագրական պահին երկրի, նրա մայրաքաղաքի և պետականության համար մաքառող ամենավճռական ուժը հանդիսացավ ժողովուրդը, որի տարած հաղթանակի և օժանդակության շնորհիվ դահ բարձրացավ 18-ամյա Գագիկ Երկրորդը։

Դրան հետևող տարիներին ևս Անիի քաղաքացիներն ու զորքը մայրաքաղաքը համառորեն պաշտպանեցին բյուզանդական հետագա երեք արշավանքներից՝ այն ժամանակ, երբ վերնախավերը վիճում էին թե ում հանձնեն քաղաքը, իսկ Պետրոս կաթողիկոսն ու Վեստ Սարգիսը Անին և Շիրակը բյուզանդացիներին վաճառելու գործարք էին կնքում։ Բացառիկ մեծ է եղել Անիի բնակչության դերը 1064 թ. քաղաքը սելջուկներից պաշտպանելու գործում, 1123 թ. Շադդադյանների դեմ բարձրացված ապստամբության և 1126 թ. քաղաքը Փաղլունի զորքերից պաշտպանելու ժամանակ, ինչպես և 1155 և 1161 թթ., երբ նա ապստամբեր էր Շադդադյանների տիրապետության դեմ։

Խլաթի բնակչության դերի մասին մի վկայություն պահպանել է Ռաշիդ-ադ-դինը. Մայափարկինի էմիր Նաջիմ-ադ-դինի (իշխել է 1200—1210 թթ.) ոտնձգություններից պաշտպանվելու համար Խլաթի էմիր Բալբանը օգնության է կանչում Արզրումի էմիրին, որը հարմար առիթ դտնելով, սպանում է Բալբանին և փորձում գավթել Խլաթը. սակայն քաղաքի բնակիչները մարդ են ուղարկում Նաջիմ-ադ-դինի մոտ և քաղաքը հանձնում նրան։ Բայց շուտով Խլաթի բնակչությունն ապստամբում է Նաջիմ-ադ-դինի դեմ, և վերջինս քաղաքը գավթում է զենքի ուժով[3]։

Իհարկե քաղաքային բնակչությունը միասնական չէր, քաղաքային վերնախավերի և ստորին զանգվածների շահերը հակադրվում էին իրար. ուստի միևնույն անցքերի ժամանակ հասարակական տարբեր խավերը տարբեր դիրք էին բռնում։ Այդ տեսանք մասնավորապես 1037 և 1041—1045 թթ. անցքերի կապակցությամբ։ Նույն Անիի կյանքից կարելի է բերել ևս մի ցայտուն օրինակ։ Վերևում նշվեց, որ երբ մոնղոլները Չարմաղանի գլխավորությամբ հարձակվեցին Անիի վրա, քաղաքի ավագանին, առանց քաղաքի տեր Շահնշահի, վարանեց ընդունել կամ մերժել մոնղոլների առաջարկը քաղաքը հանձնելու մասին։ Կիրակոս Գանձակեցին պատմելով այդ եղելության մասին, ավելացնում է. «իսկ ամբոխ քաղաքին և ռամիկքն սպանին զպատգամավորսն» և ոտքի կանգնեցին քաղաքը թշնամուց պաշտպանելու համար[4]։ Եթե քաղաքի վերնախավերը իրենց

---

[1] Չամչյան, Հայոց պատմություն, հատ. Բ, էջ 920։

[2] Մատթեոս Ուռհայեցի, էջ 85։

[3] Рашид-дин, Сборник летописей, т. III, кн. II, Е.—Л., 1952, էջ 195։

[4] Կիրակոս Գանձակեցի, էջ 245։

կալվածքները, հարստությունները ու անձը փրկելու համար թշնամու հետ համաձայնություն գտնելու քաղաքականություն էին վարում, ասա ամեն դեպքում տուժող ժողովուրդը վճռական դիմադրություն էր ցույց տալիս հակառակորդին։ Բնորոշ է պատմիչի վկայությունը, որ նույն այդ դեպքերի ժամանակ «ոմանք յիշխանաց քաղաքին ձեռնտու եղեն առ թշնամիսն, զապրուստ անձանց շահելով»[1]։ Պետք է նկատել սակայն, որ քաղաքային ժողովներում վրճռական դեր խաղում էին քաղաքի վերնախավերը և սակավ դեպքերում միայն՝ ապստամբած աշխատավոր բնակչությունը։

* * *

Ամփոփելով քաղաքային վարչության և ինքնավարության հարցի քննությունը, կարելի է հանգել հետևյալ եզրակացություններին.

1. IX—X դդ. առաջացող և ձևավորվող ֆեոդալական քաղաքները Հայաստանում մեծ մասամբ հանդիսանում էին ֆեոդալների նստավայրեր և կառավարվում էին ֆեոդալ տիրոջ կողմից, ուստի ունեին սենյորիալ կարգեր։ Շատ ավելի փոքր թվով քաղաքներ գտնվում էին ընդհանուր պետական ենթակայության ներքո և կառավարվում էին սյուդերենի կողմից նշանակվող կառավարիչներով, որոնք օժտված էին վարչական, ռազմական ու տնտեսական իշխանությամբ, այլ խոսքով՝ ֆեոդալ տերերի իշխանությունը քաղաքներում անբաժանելի էր։ Քաղաքներում կային և՛ վարչական իշխանության մարմիններ, և՛ պետշտոններ. դատարան՝ եպիսկոպոսի կամ զադիի գլխավորությամբ, ոստիկանական և շուկայական վարչություն՝ մուհթասիբի գլխավորությամբ և հարկահան պաշտոնյաներ։ Սրանք ամբողջովին և անմիջականորեն ենթարկվում էին սենյորի իշխանությանը։

2. X դ. սկսած դեռևս սենյորիալ իշխանության պայմաններում, քաղաքներում գոյանում է «գլխաւորք քաղաքին» կոչվող ինստիտուտը, որը քաղաքային ավագանու խորհուրդն էր և հանդիսանում էր քաղաքային ինքնավարության մարմին, որի գլուխ էր կանգնած քաղաքի ամիրը։ Քաղաքային ավագանու խորհուրդը և նրա ղեկավար ամիրը՝ թեև ենթակա էին սենյորին, սակայն մասնակցում էին քաղաքի կառավարմանը, այս կամ այն չափով սահմանափակում էին սենյորի իշխանությունը, և սենյորի հետ միասին տնօրինում էին քաղաքի արտաքին կապերի, ներքին կյանքի և տնտեսության հետ կապված առավել կարևոր հարցերը։ «Գլխավորք քաղաքին» կոչված քաղաքային ավագանու խորհրդի մեջ մտնում էին քաղաքի աշխարհիկ և հոգևորական դասերի, քաղաքային մեծատուններ, բնակչության տարբեր սոցիալական խմբերի ներկայացուցիչները, XI—XIII դդ.՝ հավանաբար նաև արհեստավորական եղբայրությունների համաքաղաքային «ատեան ծերոց» կոչվող խորհրդի ներկայացուցիչները։

3. Քաղաքային ինքնավարության զարգացման համար ավելի նպաստավոր պայմաններ կային ընդհանուր պետական ենթակայության քաղաքներում։ Այդպիսիներից էր Բյուզանդական կայսրության սահմաններում գտնվող Արծն քաղաքը, որը դեռևս X դ. երկրորդ կեսին և XI դ. առաջին կեսին դարձավ ինքնավար քաղաք—համայնք՝ Πολιτεια ուներ սեփական աշխարհազոր։ Քաղաքային ավագների խորհուրդ ուներ և Անին, որն իր ինքնավարությունն ավելի ամ-

[1] Կիրակոս Գանձակեցի, էջ 245։

բապնդեց XI դ. կեսերին, սակայն ընկնելով սելջուկների տիրապետության տակ և 1072 թ. անցնելով Շաղդադյանների ձեռքը, կրկին սենյորիալ քաղաք դարձավ։ Անիի բնակչությունը 1123, 1126, 1155, 1161 թթ. համառ պայքար է մղել իր սենյորի դեմ՝ նրա ճնշումից ազատագրվելու և ինքնավարությունն ամրապնդելու համար՝ դիմելով հղորացած վրաց թագավորի օգնությանը և ճանաչելով նրա իշխանությունը։ 1199 թ. ազատագրվելով Շաղդադյաններից, Անին Հյուսիսային Հայաստանի հետ միասին մտավ վրաց պետության կազմի մեջ. Թամար թագուհին ազատագրված հայկական հողերը իբրև ֆեոդալական տիրույթ շնորհեց Զաքարյաններին, սակայն Անին չդարձավ նրանց նստավայրը, այլ կառավարվում էր ավագանու խորհրդի կողմից, որի գլխավոր ամիրին նշանակում էին Զաքարյանները։ 1206 թ. Կարս քաղաքը իր բնակչության պահանջով ենթարկվեց անմիջականորեն Թամար թագուհուն և նույնպես ինքնավարություն ձեռք բերեց։ XII դ. և XIII դ. առաջին քառորդում վրաց հղորացած պետությունը սելջուկյան մրցակիցների և ներքին կենտրոնախույս ուժերի դեմ մղվող պայքարում ձգտում էր ամրապնդել իր տնտեսական և քաղաքական հենարանը՝ իրեն միացնելով Հայաստանի մի քանի խոշոր քաղաքները, որոնք իրենց հերթին ձգտում էին Վրաստանի օգնությամբ թոթափել օտարի սենյորիալ լուծը և ամրապնդել իրենց ինքնավարությունը։

4. Քաղաքային կյանքի և ինքնավարության զարգացումն իր արտահայտությունը գտավ նաև աշխարհիկ դատարանի առաջացման և քաղաքային բնակչության զերի աճման ու ընդհանուր ժողովների գումարման մեջ։ Միջնադարյան Հայաստանի քաղաքներում առաջացած ինքնավարությունը, սակայն, դեռևս բարձր զարգացման չհասած, ծանր հարվածներ ստացավ և խափանվեց մոնղոլական տիրապետության ժամանակ։

ГОРОДСКАЯ АДМИНИСТРАЦИЯ И САМОУПРАВЛЕНИЕ В СРЕДНЕВЕКОВОЙ АРМЕНИИ

Проф. Б. Н. АРАКЕЛЯН

(Резюме)

Рассматривая вопрос о городской администрации и самоуправлении в средневековой Армении, автор статьи приходит к следующим выводам:

1. В IX—X вв. города Армении носили сеньоральный характер и городская администрация всецело являлась орудием власти сеньора.

2. Еще в X в. в условиях сеньоральной власти в управлении городов начинают принимать участие представители городской верхушки. Источники показывают, что в XI—XIII вв. в городах существовал совет старейшин, именовавшийся «глхаворк кахакин», а не «ерицани», как считалось раньше. Совет старейшин был органом городского самоуправления, во главе которого стоял градоначальник—амира.

3. Борьба за городское самоуправление шла повсеместно, но для ее успеха наиболее благоприятные условия существовали в городах общегосударственного подчинения. Таким крупным городом, например, был Арцн, население которого в первой половине XI в. представляло собой

самоуправляемую общину — πολιτεία, имевшую собственные вооруженные силы — ополчение.

4. Упорный характер носила борьба против сеньора и за самоуправление в городе Ани. Горожане здесь добились заметного успеха в середине XI в., однако после тяжелых ударов, нанесенных городу сельджуками, Ани вновь стал сеньеоральным городом. Горожане продолжали борьбу в 1123, 1126, 1155, 1161, 1173/74 гг.; они подняли восстание против своего сеньора из рода Шеддадидов и трижды обращались за помощью к грузинскому царю, изъявляя желание признать его власть. После присоединения северной части Армении к Грузии царица Тамара пожаловала армянские земли Захаридам, которые, однако, не превратили Ани в свою резиденцию, и город вновь приобрел самоуправление.

5. В 1206 г. город Карс, освободившись от власти сеньора, вошел в состав грузинского царства, но горожане поставили условие перед Тамарой — не передавать город во владение другим феодалам. Таким образом, Карс стал городом общегосударственного подчинения и приобрел самоуправление.

6. Усилившееся грузинское царство в борьбе с сельджукскими государственными образованиями и внутренними центробежными силами стремилось расширить и укрепить свою экономическую и политическую базу присоединением ряда крупных городов северной части Армении, а население этих городов стремилось с помощью Грузии избавиться от ига чужеземных сеньоров и укрепить свое самоуправление в условиях общегосударственного подчинения.

Развитие городской жизни и самоуправления нашло свое отражение также в разграничении светского законодательства от церковного, в возникновении светского суда наряду с судебной властью духовенства, в усилении роли городского населения в созыве общегородских собраний.

Не успев достигнуть высшего развития, это самоуправление сошло на нет в связи с нашествием монголов и упадком городов средневековой Армении в XIV в.